

**ՕԳՈՍՏԻՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԵՔՈՒԼԵԱՆԸ  
ԵՒ ՆՐԱ ԲԵՐԱԾ ՆՊԱՍՏԸ  
ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆԸ**

Լրացաւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան անդամ Հ. Օգոստինոս վարդապետ Սեփուլեանի ծննդեան 80 եւ հայագիտական վաստակաշատ գործունէութեան 60-ամեակը

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան անդամ Հ. Օգոստինոս Զաքարի Սեքուլեանը ծնուել է Տրանսիլուանիայի (այժմ Ռումինիա) Զորջովի կոչուող գիւղաքաղաքում, 1921 թուականի սեպտեմբերի 19-ին:

Սկզբնական կրթութիւնը ստացել է ծննդավայրում:

1931 թուականին մեկնել է Վիեննա, ուր եւ սովորել ու աւարտել է գիմնազիան:

1938 թուականին նա դարձել է Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան անդամ:

1944 թուականին ստացել է վարդապետի կոչում:

1940-ական թուականի սկզբում ընդունուել եւ 1947 թուականին աւարտել է Վիեննայի ազգային համալսարանի փիլիսոփայութեան ու աստուածաբանութեան ֆակուլտետը: Համալսարանում հետեւել է ասորերէնի, արամայերէնի, եբրայեցերէնի ու արաբերէնի դասընթացներին:

1957 թուականին Հ. Օգոստինոս Սեքուլեանը մանկավարժի պաշտօնով մեկնել է Բէյրութ, ուր դասաւանդել է տեղի Մխիթարեան վարժարանում: 1959 - 1968 թուականների ընթացքում վարել է այդ վարժարանի տնօրէնի պաշտօնը:

1968 թուականին նա վերադարձել է Վիեննա - ընտրուել է Միաբանութեան վարչութեան անդամ:

1980 - 83 թթ. եւ 1990 - 92 թթ. վարդապետ Օգոստինոս Սեքուլեանը ստանձնել է «Հանդէս ամսօրեայ» պարբերականի խմբագրի պաշտօնը:

Սկսած 1992 թուականից մինչեւ այսօր նա վարում է Ամերիկայի Լոս Անջելոս քաղաքում գործող Միխիթարեան վարժարանի տնօրէնի պաշտօնը:

Հ. Օգոստինոս Սեքուլեանը 1943 թուականից սկսել է զբաղուել գրական-գիտահետազօտական աշխատանքով: Վեց տասնամեակի ընթացքում նա հրատարակ է հանել տասնեակի հասնող արժէքաւոր մենագրական աշխատութիւններ, բազմաթիւ հետազօտութիւններ, յօդուածներ, ուսումնասիրութիւններ ու գրախօսականներ դրամագիտութեան, աղբիւրագիտութեան, ձեռագրագիտութեան, մատենագիտութեան եւ հայագիտութեանը վերաբերուող այլեւայլ հարցերով:

Կենսագրութեան մասին այս հպանցիկ ծանուցումից յետոյ, ցանկանում ենք անդրադառնալ նրա գիտական, աւելի ստոյգ, հայագիտական վաստակի վերհանմանն ու գնահատմանը:

\* \* \*

1943 թուականին, տակաւին քսաներկու տարեկան հասակում, երիտասարդ Սեքուլեանը Հ. Ղուկաս Առաքելեանի ընկերակցութեամբ «Հանդէս ամսօրեայ» պարբերականում հակադրուելով Հ. Վ. Հացունուն, հրատարակ են հանում «Մլբէի Աւետարանը 932-ին գրուած» խորագրով յօդուածը:

Յենուելով տոմարական հաշուարկներին եւ այլեւայլ աղբիւրների վրայ, նրանք փաստական են դարձնում, որ այդ «Աւետարանը» գրուած է ո՛չ թէ 902, այլ 932 թուականին:

1947 թուականին դարձեալ «Հանդէս ամսօրեայ»-ում լոյս է տեսնում Հ. Սեքուլեանի «Հայ ծագումէ՞ք էր Մօրիկ կայսրը» տեւոնում: Հ. Սեքուլեանի «Հայ ծագումէ՞ք էր Մօրիկ կայսրը» վերնագրով յօդուածը: Քանի որ յօդուածագիր Սեքուլեանի հավերժարար գիտական մօտեցումը վեր է ամէն մի զգայական վերաբերմունքից, ուստի նա այդ յօդուածում մերժում է աւանդաբար կրկնուող գրառումները՝ նուիրուած Մօրիկ կայսեր ազգութեամբ հայ լինելու վարկածին - վկայակոչելով համապատասխան աղ-

բիւրներ, հաւաստում է, որ Մօրիկ կայսրը ազգութեամբ եղել է հռոմէացի:

Նոյն թուականին Օ. Սեքուլեանը դարձեալ «Հանդէս ամսօրեայ»-ում հրատարակ է հանում մի նոր ուսումնասիրութիւն: Այն կրում է «Նոր կտակարանի գիրքեր ու կարգը հայոց քով» վերնագիրը: Երկու տարի անց՝ 1949 թուականին, այդ աշխատութիւնը լոյս է տեսնում նաեւ առանձին գրքով՝ իբրեւ «Ազգային մատենադարան» մատենաշարի հերթական ճի գիրք:

Քննութեան առնելով նոր կտակարանի կանոնի մասին հայկական ձեռագրերում եղած գրառումների հետազոտութիւնը, աշխատութեան հեղինակը պարզաբանում ու յստակութիւն է մտցնում տարընթերցումների հարցում: Այս աշխատութիւնը նաեւ փաստական է դարձնում հեղինակ Օ. Սեքուլեանի մեռած լեզուների իմացութեան չափը - նրա աղբւրազիտական հմտութիւնը:

Հ. Օգոստինոս Սեքուլեանի հայագիտութեանը նուիրուած վաստակում կարեւոր տեղ է գրաւում դրամագիտութեան հետ կապուած հարցերի քննարկումը: Այս թեմայի վերաբերեալ նա հրատարակել է «Վիեննայի Մխիթարեան թանգարանի կոստանդին Գ. եւ Լեոն Ե. դրամները» (Վիեննա, 1971թ.) եւ «Դրամագիտական պրպտումներ» (Վիեննա, 1982թ.) վերնագրով գրքերը - մի շարք յօդուածներ: Այս առումով ուշադրութեան արժանի խնդիրներ ու հարցադրումներ են արժարժուած դրամագէտ Զարեհ Պտուկեանի «Հանդէս ամսօրեայ»-ում տպագրուած յօդուածի առիթով, նրա կատարած դիտարկումների մասին:

Դրամագիտութեան մէջ Հ. Օգոստինոս Սեքուլեանի ներդրած վաստակը աւելի ակներեւ ու ցցուն է դառնում 1960 թուականին «Հանդէս ամսօրեայ»-ում տպագրուած «Այս քաղաքին մէջ կոխուած հայ դրամներ» վերնագրով յօդուածում:

Բերելով համապատասխան փաստարկներ եւ դրանք հիմնաւորելով Ալիշանի յայտնած տեսակէտների միջոցով, Հ. Օ. Սեքուլեանը տրամաբանական է դարձնում իր առաջադրած վարկածը եւ համոզմունք է յայտնում, որ Հեթում Ա-ի ժամանակ յատկապէս, վերջին տարիների ընթացքում նախադրեալներ են ստեղծուել Միսի ու նաեւ Տարսոնի փողերանոցը «ատեն մը» Այսս տեղափոխելու համար, ուր եւ հատուել են մի շարք պղնձեայ

դրամներ, որոնց նմոշները յօդուածագիրը յայտնաբերել է Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան հաւաքածուի մէջ:

Անցեալ դարի կէսերին հայկական սկզբնաղբիւրների հանդէպ առաջ եկած բուռն հետաքրքրասիրութեան թելադրանքով Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան հայագիտական դպրոցի առաջ ծառանում է համապարփակ - գիտական բնոյթի ձեռագրացուցակ կազմելու - հրատարակելու խնդիրը:

1895 թուականին Միաբանութեան տպարանում լոյս է տեսնում Յակոբոս Տաշեանի «Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» խորագրով աշխատասիրութիւնը:

Ի զարմանս ամէնքի՝ 1976 թուականին կատարուած հաշուարկի, ինը տասնամեակի ընթացքում այդ հիմքի վրայ հրատարակ եկած ձեռագրացուցակների ընդհանուր քանակը հայ իրականութեան մէջ հասնում է 355 միաւորի:

1964 թուականին Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան անդամ Հ. Համազասպ Ոսկեանը հրատարակ է հանում Վիեննայի մատենադարանի ձեռագրացուցակի նաեւ Բ գիրքը:

Չանցած երկու տասնամեակ՝ 1983 թուականին Հայր Օգոստինոս վարդապետ Սեքուլեանը լոյս է ընծայում այդ աշխատութեան երրորդ - վերջին հատորը:

Համազասպ Ոսկեանը իր հրատարակած աշխատութեան երկրորդ հատորի առաջաբանում դիտել է տալիս, որ իր ձեռնարկած գործը կազմաւորուել է չորս տասնամեակի ընթացքում: Հայր Օգոստինոսը նման հաւաստիացում չի անում, սակայն այդ դեռ չի նշանակում, թէ նոյնքան աշխատատար չի եղել իր հեղինակած երրորդ հատորի ծնունդը:

Նման աշխատութիւն իրականացնելու համար աշխատասիրողը պէտք է կարդար ու նաեւ հետազօտէր ցուցակում ընդգրկուող 1256 միաւոր ձեռագրերը եւ ապա կազմէր իւրաքանչիւրի բնութագրականը ու հակիրճ ծանօթագրութիւնը: Բնութագրաբնութագրականը ու հակիրճ ծանօթագրութիւնը պահանկանի մէջ պէտք է պահպանուէր գիտական մօտեցում պահանկանի մէջ պէտք է արցերի հիմնաւորումը բնութագրող ջոտող բազմապիսի հարցերի հիմնաւորումը բնութագրող սկզբունքներ: Նա պէտք է գրառում յատկացնէր - բնորոշ քաղուածքների միջոցով արժէքաւորէր ու օգտուողին հրամցնէր ձեռագրի բովանդակութիւնը:

Եթէ ուշադրութեան կենտրոն բերենք աշխատասիրողի գիտական բծախնդիր հետեւողականութիւնը 1256 միաւոր ձեռագրի հանդէպ, ապա հասկանալի կը դառնայ, որ նման աշխատութիւնը կարելի է իրականացնել միայն գործիմացութեան, հմտութեան, մեծ նուիրումի եւ տքնաջան ու տեւական աշխատութեան միջոցով:

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան ձեռագրատանն ամբարուած սկզբնաղբիւրներից օգտուել ցանկացող մտաւորականը առանց Վիեննա գնալու, դիմելով Հ. Օգոստինոս վարդապետ Սեքուլեանի աշխատութեանը, կարող է լրիւ տեղեկութիւններ ստանալ իրեն զբաղեցնող թեմայի վերաբերեալ: Առանձին դէպքերում կարող է նոյնիսկ բաւարարուել եղածով – օգտուել գրառումից: Այս ամէնը, ի պատիւ աշխատութեան հեղինակի, կատարուած է գիտական մակարդակով – հանդիսանում է արժէքաւոր ներդրում հայագիտութեան մէջ:

Նոր Զուղայի ձեռագրացուցակի մասին «Հանդէս ամսօրեայ»-ում հրատարակուած գրախօսականի մէջ Օգոստինոս Սեքուլեանը Յակոբոս Տաշեանի կոթողային ձեռագրացուցակի հետ չափուելը համարելով անհնար, այդ գործով զբաղուողին խորհուրդ է տալիս հանդէս բերել գէթ նմանուելու ձգտում: Չցանկանալով խախտել վաստակաշատ ձեռագրագէտի համեստութիւնը, այսուհանդերձ պէտք է ասել, որ նրա հեղինակած ձեռագրացուցակը չափուելու աստիճան համապատասխանում է Յակոբոս Տաշեանի կազմած հատորին՝ բոլոր առումներով: Սակայն, չպէտք է անգիտանալ, որ Օգոստինոս Սեքուլեանի կազմած հատորում ցանկագրուած բնագրերի մեծագոյն մասը չեն կարող դասուել ձեռագիր հասկացութեան դասական օրինակների թուին, որ այստեղ չկան մանրանկարչութեան գոհարներ, գլխազարդեր ու լուսանցքազարդեր, որ այս ձեռագրերը արժէք չեն ներկայացնում գրչութեան արուեստի առումով – այլն՝ իրողութիւն է, որ այս հատորում գետեղուած ձեռագրերի մեծագոյն մասը չեն կարող ուշադրութեան արժանանալ հնութեան առումով: Ի դէպ, նման հարցադրում ծագել է նաեւ երկրորդ հատորի տպագրութեան առիթով: Քննադատութիւնը հարց է բարձրացրել «Դիւանական բնոյթ եւ արժէք» ունեցող ձեռագրերը «զանց ընել»: Այս պահանջը հարցի լուծման լաւագոյն միջոցը չէ: Աւելին, բանասիրութիւնը շատ արժէքներ չըջանցած կը լինէր, եթէ այդ մտայ-

նութիւնը իրականութիւն դառնար: Մեր խորին համոզմամբ նորօրեայ ձեռագրերը չի կարելի եւ չպէտք է գնահատել նախորդների համար սահմանուած չափանիշներով:

Գրատպութեան գոյութեան պայմաններում ստեղծուած ձեռագրերը հետզհետէ ձեռք են բերում նոր տեսք, նոր արժէք – իմաստաւորում: Գաղտնիք չէ, որ նորօրեայ ձեռագրերից շատերը չունենալով գնահատելի արժէք հնութեան առումով, մեծ հետաքրքրութիւն – արժէք են ներկայացնում հայագիտութեան համար: Ուստի ոչ միայն պէտք է հաշտուել այդ իրողութեան հետ, այլեւ գնահատել, որ սոյն ձեռագրացուցակի մէջ աշխատասիրողի հեռատեսութեամբ տեղի է ունեցել նախկինում ընդհանրացուած հասկացութեան ընդլայնում եւ իմաստային կողմի հարստացում: Արդիականութեան թելադրանքով անառարկելի է դառնում ձեռագրացուցակի մէջ ընդգրկման հարցում Օգոստինոս Սեքուլեանի մօտեցման ճշմարտացիութիւնը, ուստի մի նոր առումով մեծանում է նրա հրատարակած աշխատութեան լաւատեսական արժէքն ու հայագիտութեանը բերած նպաստը:

Ձեռագրութեան արժէքը մեծ է ինքնին, սակայն այսօր տեղեկատուութեան վիթխարի հոսքի պայմաններում, նման կոթողային գործի լոյս ընծայումը ունի նաեւ այլ կարգի՝ արդիականութեան պահանջները բաւարարող պարտաւորութիւններ ու առաւելութիւններ:

Ձեռագրացուցակում իրականացուած որակն ու մակարդակը մեզ իրաւունք է տալիս Մխիթարեան վաստակաւոր հայրերի կողքին դնելու նաեւ Հ. Օգոստինոս վարդապետ Սեքուլեանի աշխատը:

1986 թուականին լրանում է Վիեննայում անընդմէջ լոյս տեսնող «Հանդէս ամսօրեայ» պարբերականի հրատարակութեան 100 ամեակը: Այդ ամսագրի ծալքերում մէկ դարի ընթացքում ամբարուած նիւթերը հայագիտութեան տրամադրութեան տակ դնելու եւ իր դասակիցների վաստակը հանրութեանը ներկայացնելու մղումը իբրեւ պարտականութիւն ծառանում է Օգոստինոս վարդապետ Սեքուլեանի առջեւ եւ նա ձեռնամուխ է լինում հանդէսի մատենագիտութիւնը կազմելու գործին: Այդ աշխատութեան իրականացումը վաստակաշատ հետազօտողից խլում է քառամեայ երկարատեւ տքնաջան ու հետեւողական աշխատանք:

1990 թուականին Վիեննայի Միաբանութեան տպարանում լոյս է տեսնում այդ ամսագրի 100 ամեակը ամբողջացնող «Հանդէս ամսօրեայ»ի յօդուածներու 100 տարուան մատենագիտական ցուցակ» խորագրով 400 մեծադիր էջից բաղկացած աշխատութիւնը:

Մեր խորին համոզմամբ ամէն պարբերական չէ, որ իրաւունք ունի դառնալու նման մատենագիտութեան պահանջատէր: Այդ հարցում էական չափանիշ է դառնում ժողովրդի կեանքում այդ ամսագրի կողմից ներդրուած վաստակի կշիռը – ունեցած դերը՝ հասարակական-քաղաքական ու պատմամշակութային կեանքում:

Եթէ այդ առիթով ցանկանանք անդրադառնալ այս պարբերականի կատարած դերին եւ նպատակադրուենք գնահատանքի խօսք ասել «Հանդէս ամսօրեայ»ի մասին, առանց վարանելու պէտք է ընդգծենք այդ պարբերականի բացառիկ լինելը:

Իր գործունէութեան ընթացքում «Հանդէս ամսօրեայ»ն սատար է կանգնել ու նպաստել է հայագիտութեան ծաղկմանը եւ փրկել է մեր մշակութային կեանքը հոգեւոր աղքատացումից:

Միալ կը լինի ասել, թէ հայագիտութիւնը ծնունդ է առել «Հանդէս ամսօրեայ»ի միջոցով: Այդ գիտութիւնը ծլարձակել է վաղնջական ժամանակներում: Սակայն, իրողութիւն է, որ «Հանդէս ամսօրեայ»ի միջոցով այդ հաւաքական գաղափարաբանութիւնը վերածուել է համակարգման, դարձել է գիտական դիսցիպլինա: Այս առումով «Հանդէս ամսօրեայ»ն մնայուն հետք է թողել ո՛չ միայն Միաբանութեան մշակութային կեանքի մէջ, այլեւ զօրավիգ է դարձել հայագիտական մտքի աշխուժացման ու տարածման գործում:

Մատենագիտութիւնը, ինչպէս ցոյց է տալիս բառի երկրորդ բաղադրիչը, գիտական դիսցիպլինա է: Այդ աշխատանքով զբաղուողը կամ դրա մասին խօսք ասողը կամայ թէ ակամայ պէտք է ցուցաբերի գիտական մօտեցում: Ի պատիւ այս «Մատենագիտութեան» իրականացնողի՝ պէտք է ասենք, որ Օգոստինոս վարդապետ Սեքուլեանը այդ աշխատութեան մէջ Հանդէս է բերել անուրանալի գիտական մօտեցում:

Մատենագիտութեան արժէքաւորման ամենաէական չափանիշն այն է, թէ ինչ ծաւալի ու մակարդակի տեղեկատուութիւն է մատուցում հետազօտողին եւ ապա թէ ինչպիսի դիւրութիւն

է ստեղծուում օգտուողի համար, որոնածը առանց դժուարութեան յայտնաբերելու հարցում ու նաեւ ինչպիսի ճշտութեամբ են հրամցւում մատենագրուող նիւթի բովանդակութիւնը թեմատիկ իմաստով: Այս առումով օգտուողը կարող է արժանին հատուցել հեղինակին: Որքան տքնաջան է եղել աշխատասիրողի ջանքերը, այնքան դիւրացել եւ արդիւնաւէտ է դարձել օգտուողի գործը: Այս հանգամանքն էլ մեզ համար պարտաւորեցնող է դարձրել նրա կատարած աշխատանքի գնահատման գործում:

«Քանի մը խօսք» վերնագրով նախաբանում հեղինակը յոյս է յայտնում, որ իր կատարած աշխատանքը «կը դիւրացնէ ուսումնասիրողի գործը»: Հարկ ենք համարում հաւաստիացնել, որ աշխատութիւնը իրականացնողը հասել է իր նպատակին: Մտենազիտութիւնը իրականացուած է մեծ հմտութեամբ – գործիմացութեամբ, մտաւորականի սեղանին է դրուած նախանձախնդիր մակարդակով կատարուած աշխատութիւն – դիմողին հնարաւորութիւն է տալիս օգտուել հանդէսում ամբարուած զիտութեան հսկայական պաշարից:

Օգոստինոս Սեբուլեանի աշխատանքային գործունէութեան մէջ կարեւոր տեղ է գրաւում նաեւ թարգմանչական աշխատանքը: 1987 թրականին նա լոյս է ընծայում «Աշխարհաբար սաղմոսարան» վերնագրով գիրքը: «Երկու խօսք» վերնագրով առաջաբանում նա հարկ է համարում ընթերցողին յայտնելու հետեւեալը. «Թարգմանութիւնս կատարուած է կէս ազատ... նկատի առնուած են վերջին տարիներուն հրատարակուած քննական թարգմանութիւնները՝ գերմաներէն, ֆրանսերէն, անգլերէն, յունարէն – լատիներէն, բայց իբրեւ հիմնական բնագիր, պահուած է հայ Աստուածաշունչի Մեսրոպեան թարգմանութիւնը եւ այդ պատճառով ալ, այս թարգմանութիւնը որոշ ընթերցուածներու պարագային կը խոտորի եւրոպական բնագիրներէն»:

Սեբուլեան վարդապետը վերջին տարիների ընթացքում իրականացրել է նաեւ «Աստուածաշունչ» մատենի աշխարհաբար թարգմանութիւնը, որը սակայն տակաւին հրատարակուած չլինելու պատճառով մենք դրան թէեւ անդրադառնալ չենք կարող, սակայն, կ'ուզենայինք տպագրուած տեսնել նրա երկար տարիների տքնանքի ու յամառ աշխատանքի արգասիքը:

Միաբանութեան վաստակաշատ հիմնադիր Մխիթար Սեբաստացին իր հիմնադրած միաբանութեան անդամներին՝ հոգեւոր հայրերին, իբր պատգամ ականդութիւն է թողել իրականացնել «Ուսումն ամենայն կարեւոր գիտութեանց» եւ օգնութեան հասնել «ազգի հոգեւոր կարօտութեանը»:

Օգոստինոս Սեքուլեանի գործունէութեան հիմքում արմատաւորուած է Մխիթար Սեբաստացու պատգամի գործնական իրականացումը: Հաւատարիմ իր հոգեւոր կոչմանը՝ շուրջ վեց տասնամեակի ընթացքում նա ծառայել է հայազիտութեանն ու միաբանութեան բարգաւաճմանը եւ երիտասարդ սերնդի դաստիարակութեանը, ձգտելով իր պարտքը կատարել Մեծն Մխիթարի կողմից ականդութիւն թողած պատգամի իրականացման գործում:

Մեր խօսքն ականդութեան առաջ սրտանց շնորհաւորում ենք հայր Օգոստինոսին՝ նրա ծննդեան 80 եւ հայազիտութեան ասպարիզում արգասաւոր գործունէութեան 60-ամեակի առիթով:

ԽԱԶԻԿ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ